ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

Լերմոնտովո համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի նիստի.

գ. Լերմոնտովո Համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Էդիկ Համբարձումի Չախալյանը

Մասնակցում էին՝

Համայնքի ավագանու անդամներ՝ Վիտալի Ասադովը, Բոլոտին Իվանը, Քրիստինե Խառատյանը, Անդրեյ Կորոլյով, Վասիլի Կորոլյովը; համայնքապետարանի աշխատակիցները:

ՆԻՍՏԸ - Էդիկ Չախալյանը ժամը 11:00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0 ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1."Հայաստանի համայնքների միություն" իրավաբանական անձանց միությանը անդանակցելու մասին

զեկ.Մ.Բոլոտինա

2. "Բերքի տոն-2023" միջոցառման կազմակերպմանը մասնակցելու մասին

զեկ.Մ.Բոլոտինա

3.Լերմոնտովո համայնքի 2024-2026թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

զեկ.Մ.Բոլոտինա

ԸՆԹԱՑՔԸ՝

1. <u>ԼՍԵՑԻՆ</u> - "Հայաստանի համայնքների միություն" իրավաբանական անձանց միությանը անդանակցելու մասին նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց, քանի որ համայնքը հանդիսանում է "Հայաստանի համայնքների միություն" իրավաբանական անձանց անդամ՝ որպես անդամավճար յուրաքանչյուր տարի վճարվում է համապատասխան գումար:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N21/

2. <u>ԼՍԵՑԻՆ</u> - "Բերքի տոն-2023" միջոցառման կազմակերպմանը մասնակցելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան՝ որպես աջակցություն միջոցառմանը բոլոր համայնքները իրենց ներդրումն են կատարում միջոցառման կազմակերպման համար:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N22/

3. <u>ԼՍԵՑԻՆ</u> - Լերմոնտովո համայնքի 2024-2026թթ միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին որոշման նախագիծը

- զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ Մարիյա Բոլոտինան: Նա ներկայացրեց համայնքի երեք տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագիրը: Հնչեցին հարցեր ավագանու անդամների կողմից, որին պատասխանեցին համայնքի ղեկավարը և առաջատար մասնագետ-հաշվապահը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 5, ընդունվեց որոշում: /N23/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

1.ԱՍԱԴՈՎ ՎԻՏԱԼԻ

2.ԲՈԼՈՏԻՆ ԻՎԱՆ

3.ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ԱՆԴՐԵՅ

4.ԿՈՐՈԼՅՈՎ ՎԱՍԻԼԻ